



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34353-uh.

"ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՐ

ԱԶԳ. ԲՈՂՈՎՈՅ,

Երանաբան Կ. Արմենի.

1860-70.	34	շխալ
1870-74.	71	"
1874.	16	"
1875.	23	"
1876.	20	"
1877.	16	" (Կ. շախմատ)
1878.	22	"
1879.	20	"
1880.	21	" (Կ. շախմատ)
1881.	11	"
1882.	21	"
1883.	26	"
1884.	20	"
1885.	19	"
1886.	9	"
1887.	10	"
1888.	13	"
1889.	15	"
1890.	7	"
1891-1893	6	"
1894-95.	3	"
1896-97.	3	"

406 շխալ Երանաբան Կ. Արմենի

թիւ 4.

ՄԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

(տնօրէն)

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆԻՍ ԱՌԱՋԻՆ

ՋԿՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

21 ԹԿՈՍՏՈՍ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻՒԼԷՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՍՓՈՒՍՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

ԶԿՆԻ ԵՐԵՍՓՈՒՍՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

21 օԳՈՍՏՈՍ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՄԻԻԷԻՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆԻՍՏ ԱՌԱՋԻՆ

ԶԿՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՎԱՋՄՈՒԹԵԱՆ

21 ՕԳՈՍՏՈՍ 1870

ԸՆԴ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ԱՄԵՆ ԽՐԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ

Ի ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ 71 ԵՐԵՍՓՈՒԱՆՍՅ

Ատենը բացուելէն առաջ Սրբազան Նախագահը համառօտ ատենախօսութիւն մը ըրաւ . նախ՝ հրաւիրեց նախորդ Երեսփոխանները իրեն հետ մէկտեղ շնորհաւորել զնորընտիր Երեսփոխաններն , որ այսօր ներկայացած էին , յետոյ Սահմանադրութեան գործադրութեան նկատմամբ անցեալին մէջ տեսնուած թերութիւնները յիշեցնելով ըսաւ . « Երեսփոխանութեան միակ յորդոր մ'ունիմ . չափազանցութենէ հետի կենանք , Սահմանադրութիւնը հիմն բռնելով խորհինք , կշռենք , դատենք , այնչափ որչափ որ կարող եմք , եւ մեր գործնական սահմանէն անդին չանցնինք . գաւառական հայերը , Մշոյ դաշտին հարստահարեալ ժողովուրդը փրկուէտ անօրէնութիւններ մեզմէ ախնդէտ կ'սպասեն . եթէ լուսաւոր կերպով խորհածնիս խոհական կերպով գործադրենք , Ազգն ու Տէրութիւնը դո՛ւ կըլլան :

Այս ատենախօսութեան աւարտումէն ետեւ Ատենը բացուեցաւ առժամանակեայ Ատենապետութեամբ Ազարէկեան Սարգիս Էֆէնտիի :

Խօճասարեան Սգսէն Էֆէնտիի առաջարկութեամբ Քաղաքական ժողովոյ Ատենադպիր Եուսուֆեան Տիգրան Էֆէնտի հրաւիրուեցաւ առժամանակեայ Ատենադպրութեան պաշտօնին :

Ատենապետ Էֆէնտիին յիշեցնելով որ ատենական սովորութեան համեմատ խնդրոց կարգէն առաջ նախընթաց նիստի ատենադրութեան

ընթերցումն հարկաւոր է , Սրբազան Նախագահին եւ ժողովին կարծիքն հարցուց :

Ս.-ՆԱԽԱԳԱՀ. — Եթէ կարեւորութիւն ունի կարգացուի :

ԽօճԱՍՏԱՐԵԱՆ-ՕԳՍԷՆ ԷՖ. — Ստոյդ է որ քանի մի անգամ ատենադրութեանց ընթերցումը յաջորդ նիստերու թողուած է , սակայն այս վերջին նիստին ատենադրութեան ընթերցումը կարեւորութիւն ունի եւ շատ բարձր . որովհետեւ ընդ՝ ժողովը նոյն նիստին մէջ տուած է Երեսփոխանական վերակազմութեան որոշումը , որոյ գործադրութեան տեղեկագիրը պիտի ներկայացուի այսօր սոյն պաշտօնն ստանձնող Յանձնաժողովոյն կողմէն :

Ատենադրութիւնը կարգացուեցաւ , եւ Ատենապետ Էֆէնտիին հրաւիրեց ժողովականներն , որ եթէ անոր խմբագրութեան վրայ դիտողութիւն մը ունին ներկայացնեն :

ԽօճԱՍՏԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Միայն մէկ թերութիւն մը կը նշմարեմ ատենադրութեան մէջ . տեղ տեղ քաղուածներ ըրեր է ժողովականաց խօսքերն ամփոփելով . եթէ ատենադրութիւնը ընդ՝ ժողովոյ պատմութիւնն կը ներկայացնէ , պէտք է որ իւրաքանչիւր ժողովականի խօսքն իր բառերով որոշակի արձանագրուի :

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

Ա.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳՈՐԾԱԳԻՐ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅ

Ատենապետ էֆէնտի հրատարականց վրայ Գործադիր յանձնաժողովոյ Ատենապետ Օղակն էֆէնտի կը կարգայ վերջին Երեսօխոսանական ընտրութեանց Տեղեկագիրը :

Այս տեղեկագրի ընթերցումէն ետեւ Արքազան Նախագահն յիշելով թէ Օղակն էֆէնտի ներկայ Երեսօխոսանական վերակազմութեան կարեւոր գործն ինքնին ի յանդ հանած է, շնորհակալութեան քուէ առաջարկեց :

Սակայն Օղակն էֆէնտի հարկ չ'տեսաւ, առարկելով թէ ինքն եւ իր անդամակիցները ուրիշ բան մը ըրած չեն, բայց եթէ իրենց պարտաւորութիւնը կատարած են, եւ թէ իրր այն շնորհակալութեան չ'են սպասեր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկագրէն կը հասկցուի որ զեռ եւս Գործ. յանձնաժողովն իր պաշտօնը աւարտած չէ, եւ քանի մը խնդիրներ կը ներկայացնէ որք Քնդհ. ժողովոյն որոշման պէտք ունին, այս խնդիրներն են՝ Ա. 8 Երեսօխոսանի ընտրութիւնը, Բ. Քէօթահայի Երեսօխոսանին ընտրութեան համար միայն հեռագիր գալը, Գ. Գուս-Գափուի դրսի Թաղեցոց երեսօխոսանական ընտրութեան մասնակցած չ'ըլլալուն համար ըրած դիտողութիւնը, եւ Գ. այն Երեսօխոսանաց՝ որք քանի մի Թաղերէ մէկէն ընտրուած են, ո՞ր Թաղն ընդունելին յայտնուիլը եւ կամ վիճակաւ որոշուիլը :

ԻՌԹԻԻՃԱՆ-ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. — Գործադիր յանձնաժողովը կրնար այն Երեսօխոսանաց, որք քանի մի թաղէ միանդամայն ընտրուած են, դիմել եւ իրենց կամքն իմանալով, պակաս մնացած ընտրութիւններն կատարել եւ վերակազմութեան տեղեկագիրն ամբողջապէս ներկայացնել Քնդհ. ժողովոյ :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Այդ դիտողութիւնն ուրիշ ընդունելու ալ եզան ինձի, եւ Գործ. յանձնաժողովը ըստ այնմ շարժելու փորձեր բրաւ, սակայն ինչպէս կարելի է որ Քնդհ. ժողովը ընտրութեանց արդիւնքն զեռ չ'ընդունած քանի մի թաղէ միանդամայն Երեսօխոսան ընտրուող անձ մը մէկ թաղի ընտրութիւնը ընդունէր եւ միւսներն մերժէր, որովհետեւ եթէ ժողովը անոր ընդունած թաղին ընտրութեան մէջ ապօրինաւոր գործողութիւններ նշմարելով զայն

չի հաստատէ, եւ ինքն ալ կանխաւ միւս թաղերու ընտրութիւնն մերժած ըլլայ, ամենէն ալ միանդամայն պիտի զրկուի, եւ քանի մը թաղի Երեսօխոսանը եւ ոչ մէկ թաղի Երեսօխոսան պիտի կրնայ ըլլալ :

ԻՌԹԻԻՃ-ԿԱՐ. ԷՖ. — Քնդհ. ժողովը ընտրական գործողութեանց արդիւնքը կը վաւերացրնէ Գործ. յանձնաժողովոյ տեղեկագրին վրայ կրթնելով. երբ Յանձնաժողովը իր ընտրական գործողութեանց օրինաւորութեան եւ ճշգրտութեան կը վստահի, ինչ հարկ կայ կանխակալ կատարմանով պաշարուիլ եւ այս խնդիրը ետքի թողուլ : Կերեւի թէ Յանձնաժողովը իր գործողութեանց վրայ վստահ չ'է :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Մեր խօսքը չ'ենթադրելը որ Յանձնաժողովն իր գործողութեանց վրայ վստահութիւն չ'ունի, մեր յառաջ բերած պատճառէն այդ չ'ենեւիր, Միթէ կարելի չէ՞ որ նոյն իսկ Քնդհ. ժողովոյ մէջ ընտրութեանց վաւերացման միջոցին թաղի մը ընտրուող կողմէ ամբաստանական բողոքներ ըլլան եւ ան. յայտ պարագաներ մէջ բերուին եղած քուէարկութիւնը ոչնչացնելու համար : Ուստի Յանձնաժողովն այս տեսութեամբ չէր կրնար պատասխանատուութիւնն իր վրայ առնուլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մինչեւ ցայս վայր ընտրութեանց վրայ բողոքադիր մը եկած չ'կայ եւ Գործ. յանձնաժողովոյ տեղեկագրին ընտրութեանց օրինաւորութեան վրայ տարակուստուեր մը չի թողուր. ուստի Քնդհ. ժողովը կը մնայ այս տեղեկագրին հաստատել եւ կրկնակի ընտրութեան պատճառաւ պակաս մնացած 5 թաղի Երեսօխոսանաց, նոյնպէս եւ ընտրութիւններէն ետեւ մէկ վախճանակ եւ երկու հրաժարեալ Երեսօխոսանաց տեղ նոր ընտրութեանց ձեռնարկելու որոշում ընել :

Ատենապետ էֆէնտին հրատարականց ժողովականներն որ եթէ տեղեկագրին վրայ դիտողութիւն մը ունին ընեն :

Ոչ ոք դիտողութիւն բրաւ, եւ հետեւապէս տեղեկագիրը քուէի գրուելով ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցաւ :

Ատենապետ էֆէնտին շնորհաւորեց նորընտիր Երեսօխոսաններն :

ԳՕԼՕԼԵԱՆ-ԱԻԵՏԻՍ. ԷՖ. — Նորընտիր Երեսօխոսանները շնորհաւորելէ ետքը բան մը պակաս թողուցիք, կ'առաջարկեմ որ ինչպէս մեր պարտքը կը պահանջէ գաղարեալ Երեսօխոսանաց մեր երախտագիտութիւնն յայտնելու համար շնորհակալութեան քուէ տալ :

ԱՏԵՓԱՆ-ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Ելող Երեսօխոսանաց անխորհր շնորհակալութեան քուէ կատարելու հարկէ կ'առաջարկուի չ'եմ ուզել որ մինչեւ հիմա գործածուած ձեւերուն մենք ալ հետեւինք. քանիք նախ թէ ելող Երեսօխոսաններէն որոնք խոջի մտք իրենց պաշտօնը կատարեցին եւ Քնդհ. ժողովոյ նիստերուն ներկայ գտնուեցան, եւ որոնք անուամբ միայն Երեսօխոսանական պաշտօնը վրանին առին եւ գործով անխոջի գտնուեցան, եւ ետքը մեր շնորհակալութիւնը յայտնենք այն Երեսօխոսանաց՝ որք իրենց պաշտօնն արժանապէս կատարեցին. իսկ պարտազանց Երեսօխոսանաց շնորհակալութեան պարտք մը չ'ունինք :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ-ՏԻԳՐԱՆ ԷՖ. — Համակարծիք եմ այս մասին. ազգային պաշտօնեաները համարատու են Ազգին, եւ իրենց պաշտօնը երբ անթերի կատարեն չ'ուրիշ արիտուր մը չ'ունին՝ բայց միայն Ազգին համակրութիւնը. ինչո՞ւ իր պարտաւորութիւնը կատարողն ու պարտազանց անխորհր համակրական ցոյցեր ընդունին : Ասիկա ոչ միայն անիրաւութիւն, այլ եւ պարտազանցութիւնը քաջալերել է :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Ես նոյն իսկ շնորհակալութեան քուէ տալու սկզբունքին դէմ եմ. Ազգային սահմանադրութիւնը եւ հետեւաբար ազգը վարչական բոլոր գործառնութեանց եւ պաշտօններու մէջ իրաւանց եւ պարտուց սկզբունքը օրինաց հիմն ընդունած են, ինչ նշանակութիւն ունի շնորհ բառը այս սկզբանց մէջ : Ուրիշ խնդիր է թէ ժողովը գոհունակութեան քուէ կրնայ տալ :

ԳՕԼՕԼ-ԱԻԵՏ. ԷՖ. — Ես երախտագիտական պարտք մը կատարելու նպատակաւ շնորհակալութեան քուէ առաջարկեցի :

ԻՌԹԻԻՃ-ԿԱՐ. ԷՖ. — Մինչեւ փախազան էֆէնտին նոյն իսկ շնորհակալութեան քուէ տալու առաջարկութեան դէմ կը խօսի, եւ բանաւոր եւ իրաւացի պատճառ յառաջ կը բերէ, Գօլօլեան էֆէնտի շնորհակալութիւնը բաւական չ'համարելով երախտագիտութեան կ'անցնի, եւ Քնդհ. ժողովոյ վրայ աւելի ծանր պարտք մը կը դնէ, վասն զի երախտագիտութիւնն բարեբարութիւն կ'ենթադրէ : Իսկ ետեւապէս էֆէնտի գիտողութեանց գալով ես ալ համամիտ եմ անոնց : Անոնք որ ազգին ծառայութիւն ըրած են իրենց Երեսօխոսանական պաշտօնն խոջի մտք կատարելով, արժանի են ազգին համակրութեանը. ասիկայ բարոյական վարձատրութիւն մ'է եւ Քնդհ. ժողովն ինք

կրնայ ընել զայն : Սակայն պարտազանց Երեսօխոսանները ճանչուելու եւ մէկ կողմ առնուելու են, ուստի հարկ կ'ըլլայ անոնց ցուցակն չ'իյնել կանխաւ, եւ ասիկայ այսօրուան գործ չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նորընտիր Երեսօխոսանաց վաւերացումն ընեցաւ, կը մնայ հիմա Գիւսանի կազմութեան ձեռնարկել ինչպէս խնդրոց կարգը կը ցուցնէ, սա միայն պարտ կը համարիմ յաւելուլ, որ Մէրեէմ-Գուլի Ազէքսանդրէֆէնտի 29 տարեկան ընտրուած ըլլալուն համար Քնդհ. ժողովն ինչ անօրէնութիւն պիտի ընէ այսպիսի ընտրութեան համար, թէպէտեւ Մէրեէմ-Գուլի էֆէնտի ինքն ինքնին իւր 29 տարեկան ըլլալն յայտնած եւ հրաժեշտ տուած է Երեսօխոսանական պաշտօնէն :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻԵԱՆ — Այս առաջարկութիւնն աւելորդ կը գտնեմ, վասն զի Ազէքսանդրի ընտրութիւնն ժողովով անվաւեր հրատարակելու պէտք չ'կայ բնաւին, քանի որ նա իւր ընտրութեան հրատարակուած ատեն անմիջապէս հրապարակաւ Քնորդական ժողովոյ Նախագահին իւր հրաժարագիրն ուղղած է օրինաց պահանջած տարիքն լրացուցած չ'ըլլալն յայտնելով : Կերեւի թէ Քնորդ. ժողովոյ Նախագահն իւր տեղեկագրին հետ չէ հաղորդած զայն Գործ. յանձնաժողովոյն ինչպէս պարտաւոր էր ընել :

Օրինաց անթերի պահպանութեան նախանձախնդիր անձի մը համար այդպիսի առաջարկութիւն մը չ'կրնար ազէկ արդիւնք մը ունենալ :

ԵՆԻՍՈՒՅԵ-ՏԻԳՐ. ԷՖ. — Գործ. յանձնաժողովոյ տեղեկագրին նշանակած էր Մէրեէմ-Գուլի Ազէքսանդր էֆէնտին իւր 29 տարեկան ըլլալու մասին ըրած հրատարակութիւնը, բայց նորա անգն ուրիշ մը ընտրուելու պէտքն բացայայտ կերպիւ նշանակած չ'ըլլալուն համար, Գիւսանը պարտք համարած է զայն յիշեցնել ժողովին. ուստի յայտնի կը տեսնուի թէ իրեն օրինապահութեան նախանձախնդրութիւնը երբէք կատարածի ենթակայ եղած չ'էր :

Մէրեէմ-Գուլի Յարութիւն էֆէնտին Գիւսանին տուած բացատրութեանը վրայ իր գոհունակութիւնը կը յայտնէ :

Ըստ առաջարկութեան Ատենապետ էֆէնտի որոշուեցաւ միաձայն հաւանութեամբ Գործ. յանձնաժողովը Մէրեէմ-Գուլի Ազէքսանդր էֆէնտին տեղ ուրիշ Երեսօխոսանի մը ընտրութեան ձեռնարկել :

Քառորդ մը Երևափոխանաց հանգրսու արու- ելէ կաւել :

Բ.

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԴԻՒԱՆԻ ԱՆԳԱՄՈՑ

Մըրտզան Պատրիարք Հօր կողմանէ չորս և- կեղեցական և չորս աշխարհական քննիչներ որոշուեցան , որք են՝

- Ե. Եղիշ-Էմի .
- Կեր. Յովնանէս Եղիշկոյս Կապուտիկեան .
- Արժ. Արքայապետ վարդապետ .
- » Տ. Յովնանէս Մկրեան .
- » Տ. Սահակ Օրթագլուղի .

Աւարտութեան .

- Աւետիս Էֆէնտի Բօլոլեան .
- Յովնանէս » Պոյաճեան
- Կարապետ » Խիթիճեան
- Ալիքսան » Սաքայեան

որք երկու գրասեղանի բաժնուելով քուէհա- մարը կատարեցին , որոյ արդիւնքն եղաւ ,

Թիւ քուէարկուաց , 71 .

Միայն Ստեան Գրիգոր Էֆէնտի 40 քուէ ստա- նալով բացարձակ առաւելութեամբ Ատենա- պետ ընտրուեցաւ :

Հետեւապէս Կրեանին մնացեալ անդամոց ընտրութեան համար առաւելագոյն քուէ ստա- ցողներուն ցուցակը համեմատական քուէար- կութեան գրուելու միջոցին :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Սահմանադրութեան մէջ ընտրութեան շէ որ Կրեանին քուէարկութիւնը բացարձակ առաւելութեամբ ըլլայ , ուստի ժո- ղովն եթէ ուղէ կրնայ գործը չ'երկարելու համար առանց համեմատական քուէարկութեան գի- մելու առաջին քուէարկութեան մէջ առաւե- լագոյն քուէ ստացողներն ընդունիլ :

Մարտիան Յովնէֆ Էֆէնտի երկրորդելով

Օղակն էֆէնտի առաջարկութիւնը , անոր հա- մեմատ ևւ ձայնակից դանուիլը ծանոյց :

ԳԱՋԱՋԵԱՆ-ՅԱԿՈՒՅ ԷՖ. — Մինչև ցարդ Կր- ևանի անդամոց ընտրութեան համար ինչ սո- վորութիւն ունէր Ընդհանուր ժողովը :

ԹՈՐՈՍ-ԳԻՍԱԿ ՊԷՑ. — Պէտք է որ ըստ սովոր- ութեան համեմատական քուէարկութեամբ կատարուի այս ընտրութիւնը :

ԳԱՋԱՋ-ՅԱԿ. ԷՖ. — Անմիջապէս համեմատա- կան քուէարկութեան ձեւնարկուի , Սահմա- նադրութեան արամադրութիւնէն չ'խտարելու համար :

Քօլոլեան Աւետիս Էֆէնտի երկրորդեց : ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ-ԷՖ. — Ընդհ. ժողովը կրնար առանց նոր քուէարկութեան գիմելու ընտրել Կրեանին մնացեալ անդամներն :

Ատենապետ Էֆէնտի այս երկու առաջար- կութիւնները քուէի գրաւ ևւ 24 քուէի դէմ 29 քուէով Օղակն էֆէնտի առաջարկութիւնը մերժուեցաւ , ևւ վերստին քուէարկութիւն ըլլալով հետեւեալ անձինք Կրեանին անդամ ընտրուեցան ,

Թիւ քուէարկուաց 66 .

ՓՈՒ-ԱՏԵՆԱՊԵՏ . Աղարէկեան Սարգիս Է- ֆէնտի քուէ 34 :

ԱՏԵՆԱԴՊԻՐ . Եռուսեֆեան Տիգրան Էֆէնտի քուէ 43 :

ՓՈՒ. ԱՏԵՆԱԴՊԻՐ . Մէրեշմ-Գուլի Յարու- թիւն Էֆէնտի քուէ 44 :

Կրեանի անդամոց ընտրութիւնը կատարուե- լէ կաւել Փոխ Ատենապետ Աղարէկեան Սար- գիս Էֆէնտի վասն բացակայութեան նորընտիր Ատենապետին իւր պաշտօնին գլուխն անցնե- լով անմիջապէս խնդրոց կարգին , այսինքն վե- բաքննեալ Սահմանադրութեան խնդրոյն գրա- ղելու հրաւիրեց ժողովը , ևւ յաւելցուց թէ ինքն այս մասին կանխաւ ժողովն լուսաւորե- լու համար տալիք տեղեկութիւններ ունի :

ԱՏԵՓ-ՓԱՓԱՋ. ԷՖ. — Թէ ևւ Գործ. յանձնաժո- ղովը ընտրութեան տեղեկագիրն ընդունուե- ցաւ , բայց անոր մէջ Ընդհ. ժողովը անօրէ- նութեան կարօտ ինչ ինչ կէտեր կային որ ա- նորոշ մնացին , պէտք է նախ զանոնք որոշել ևւ ապա անցնիլ խնդրոց կարգին :

ՄԱՋԻԸՄԵԱՆ-ՅՈՎԱՒԷՓ ԷՖ. — Վերջին Ընդհ. ժողովը Երևափոխանական ընտրութեան գործը Յանձնաժողովի մը յանձնել է , որ իր գործողու- թեանց արդիւնքը թերի մնացած ընտրութիւն-

ներով հանդերձ կը ներկայացնէ , ըստ իս պէտք է նոյն յանձնաժողովոյն նոր արտօնութիւն մը ալ տալ մնացած ընտրութիւններն կատարելու համար :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Այն Երևափոխանաց՝ որք մէկ քանի թաղերէ միանգամայն ընտրուած են , պէտք է կառքերնին իմանալ մը թաղի ընտրութիւնն պիտի ընդունին . ևւ եթէ իրենք չ'ուզեն կամք յայտնել , վիճակաւ պիտի որոշ- ուի . ուստի նախ պէտք է որոշել թէ այս վիճակարկութիւնը մեր պիտի ըլլայ :

ԵՈՒՍՈՒՅ-ՏԻԳ. ԷՖ. — (Սահմանադրութեան 83րդ յօդուածը կարդալէ ետեւ) Եթէ իրենք չ'ուզեն կամք յայտնել , Ընդհ. ժողովը վիճա- կաւ կ'որոշէ :

ՔՈԼՕԼ-ԱՒԵՏ. ԷՖ. — Սահմանադրութեան այս պարագային մէջ Ընդհ. ժողովը բռնելիք ըն- թացքը որոշած է արդէն . ուստի չ'ենք կրնար Սահմանադրութեան շեղիլ ևւ առաջարկու- թիւն ընդունիլ այս պարագային մէջ :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Գործնական դժուարու- թեանը առջին առնելու համար , Ընդհ. ժողովը կրնայ արտօնութիւն տալ որ Գործ. յանձնաժո- ղովը Քաղ. ժողովոյ հետ համախորհուրդ կա- տարէ վիճակարկութիւնը եթէ հարկ ըլլայ , ևւ գործը ամբողջացած ներկայացնէ Ընդհ. ժողո- վին :

Ապրօ Էֆէնտի համակարծիք կը դանուի Օղ- ակն էֆէնտի առաջարկութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Սօսքը Ս. Նախագահին ուղղելով) Քանի որ Սահմանադրութիւնն է մե- ղի ուղեցոյց ասանկ պարագաներու մէջ , ևւ 2եք Սրբազնութիւնը Գործ. յանձնաժողովոյ Նախագահ կը դանուի , կրնայ Սահմանադրու- թեան ոգւոյն համեմատ ընտրութեանց վերա- բերեալ այս կրճիմն լուծել :

ԻԻԹԻԻՃ-ԿԱՐ. ԷՖ. — Քանի որ Սահմանադրու- թիւնը որոշակի կը յայտնէ թէ Ընդհ. ժողովը վիճակաւ պիտի որոշէ , ժողովը կրնայ թէ իր նիստին մէջ ևւ թէ անկէ դուրս իր Կրեանին ձեռօք ևւ Ս. Նախագահի միջնորդութեամբ վիճակարկութիւնը կատարել :

Ս-ՆԱԽԱԳԱՋ. — Այս ընտրութեանց խըն- դիրներուն մէջ Ընդհ. ժողովը իրաւունք չ'ու- նի միջամտելու . եթէ մէկ քանի թաղերէ ընտ- րուող Երևափոխանաց համար վիճակարկութիւն ընել հարկ ըլլայ , անիկա թաղեցոց իրաւ- ունքն է :

ՔՈԼՕԼ-ԱՒԵՏ. ԷՖ. — Ցաւալի է որ Սահմա- նադրութիւն մը ունիւք ձեռքերնիս , բայց զայն

ըստ քմաց դործածելով կը շեղիմք անկից : Ս-ՆԱԽԱԳԱՋ. — Մարդկային օրէնագրու- թիւններն միշտ թերութեանց ենթակայ են , ևւ վործառութեամբ կը կատարելագործուին ու կը սրբադրուին : Հիմա մենք այս սրբադ- րութեանց չըջանին մէջն ևւ՞ք :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Քօլոլեան Էֆէնտին այդ խօսքով կ'ամբաստանէ զմեզ . Սահմանադրու- թեան ողիէն ոչ չեղած եմք ևւ ոչ կը շեղիմք :

ԱՊՐՕ ԷՖ. — Այդ Սահմանադրութեան շեղիլ խօսքն իրաւացի չէ ևւ չեմք կրնար ընդունիլ : Ընդհանուր ժողովը՝ որ ստէպ իր վախուկ ևւ ծանր դործերն Յանձնաժողովներու կը յանձնէ , ինչո՞ւ չ'կրնար այս վիճակահանութեան գործն այս կամ այն ժողովին , ևւ կամ իր անդամա- կիցներէն մէկ երկուքին յանձնել :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Փորձառութեամբ կը խօ- սիմ յանուն Գործ. յանձնաժողովոյ , եթէ իմ ա- ռաջարկութեանս տարբեր նպատակ նշանա- կուի ևւ անդործագրելի մնայ , նոր 'ի նորոյ դժուարութիւններով ընտրութեանց խնդիրն պիտի երկարաձգի :

ՔՈԼՕԼ-ԱՒԵՏ-ԷՖ. — Կը ցաւիմ որ իմ խօսքս սխալ հասկցուեցաւ ևւ այսքան տարածայն բո- ղորանաց տեղի տուաւ . Ես ոչ Երևափոխանու- թիւնը ևւ ոչ Գործ. յանձնաժողովը ամբաստու- նեցի , այլ միայն որովհետեւ Ս. Նախագահը վիճակ ձգելու իրաւունքն թաղեցոց տուաւ Սահմանադրութեան հակառակ , գիտողութիւն ըրի թէ Սահմանադրութեան կը շեղիմք :

ԱՏԵՓ-ՓԱՓԱՋ. ԷՖ. — Կրկին ընտրեալ Երևափո- խաններն մեծ մասամբ բացակայ են , մինչեր- կայ է միայն . ժողովը կրնայ անոր կամքն իմա- նալ ևւ վիճակահանութեան սկզբնաւորութիւնն ընել :

Ատենապետ Էֆէնտի վիճաբանութեանց ըն- թացքէն խնդիրը լուսաւորուած համարելով ե- ղած երկու առաջարկութիւններն ամիտուեց :

Ա. Առաջարկութիւն . Գործ. յանձնաժողովը իր պաշտօնը շարունակէ մինչև յաւարտ ընտ- րութեանց :

Բ. Առաջարկութիւն . Գործ. յանձնաժողովը Քաղ. ժողովոյ աջակցութեամբ վիճակահանու- թեան խնդիր մը կարգադրէ ևւ 'ի գործ դնէ : Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին այս եր- կու առաջարկութիւններն ուրոյն ուրոյն քուէի դնելով մեծագոյն մասամբ ընդունուեցաւ :

ԻՓԷԿՃԵԱՆ-ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՖ. — Գործ. յանձ- նաժողովոյ տեղեկագիրը նշանակութեան ար- ժանի թերութիւն մ' ունի . 1867 ևւ 69 տարի-

ներուն մէջ կատարուելիք ընտրութիւնները 1870ին կը կատարուին , բայց տեղեկագիրը չ'բացարկեր մեզ թէ ինչ է այս երկարած գութեան բուն շարժառիթը : Այս պարագան պէտք է երեւան դայ եւ անցեալը լուսաւորուի , որպէս զի մենք ապագային մէջ ըստ այնմ մեր բանելիք ընթացքն որոշենք : Առանց այս թէութեան Գործադիր յանձնաժողովոյ տեղեկագիրը ըստ իս թերի է եւ անընդունելի :

Փափագեան Ասեփան էֆէնտի մի եւ նոյն գիտողութիւնը կերկրորդ է եւ կը յաւելու թէ մեծ կարեւորութիւն ունի այս առաջարկութիւնը :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Նոր խնդիր մը կը յարուցանեն ոմանք Գործ. յանձնաժողովոյ տեղեկագիրին դէմ , Յանձնաժողովը պաշտօն ունէր միայն Երեսփոխանական ընտրութիւններն կատարել , եւ իր պաշտօնին չէր վերաբերեր քննել ու յայտարարել թէ ինչու այդ ընտրութիւնները մինչեւ 1870 թուականը երկարաձգուած են : Ընդհ. ժողովը եթէ հարկ կը դատի , կրնայ յատուկ Յանձնաժողով մը կարգել , պահանջուած քննութիւնն ընելու համար :

Երբ անգամ մը անցեալին կեղեկները վերցուին , անոր ներքեւէն նոյն ինքն Պօղոս Պատրիարք դուրս պիտի ելնէ , յանցաւորը պիտի յայտնուի որ Տէրութեանէն չեմք գիտեր ինչ եւ որո՞ւ միջնորդութեան շնորհիւ 5000 դուրուշի ամսական մը կը վայելէ :

ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Խնդիրէն կը շեղիք .
 ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Ո՛չ .
 ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Այո կը հաստատեմ .
 ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Ո՛չ , ոչ , ոչ .

Այս միջոցիս ժողովականաց ոմանց մէջ շուրջ մի կը ծաւալի , ձայներ կը բարձրանան եւ Ասեփան էֆէնտի ժողովը օրինապահութեան կը հրաւիրէ , եւ լուծիւն հաստատելէ ետեւ :

ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Երբ պահ մը առաջ Երեսփոխաններն հրաւիրեցի որ Գործ. յանձնաժողովոյ տեղեկագիրին վրայ իրենց գիտողութիւնն ընեն , (ո՛չ քը պատասխանեց ասոր) , իսկ հիմա մինչդեռ տեղեկագիրը արդէն ժողովն ընդունած է , անոր վրայ գիտողութիւններ կ'ըլլան նախադրուշութեան համար . գիտողութիւններ որոնք խնդրէն դուրս են բոլորովին , եւ զմեզ խնդրոց կարգէն դուրս կը հանեն :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Իրբեւ Գործ. յանձնաժողովոյ անգամ անոր տեղեկագիրը պաշտպանելէ ետեւ , կուզեմ նաեւ իր Երեսփոխան չա-

րունակել իմ գիտողութիւններս եւ խօսք կը խնդրեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ էՖ. — Խնդրոց կարգէն կը չեղիք , եւ այս միջոցաւ չենք կրնար շարունակել ժողովը :

ԻԿԻՏ-ՊԱՇԵԱՆ-ԱՍԱՊԱ էՖ. — Անցելոյն վրայ խօսիլն աւելորդ է , խնդրոց կարգը անցնինք :

ՍՏԵՓ-ՓԱՓԱՋ. էՖ. — Ո՛չ , այդպէս չ'կրնար ըլլալ , պէտք է որ խօսինք . այդ բաները նախորդ Երեսփոխանութեան օրովը կ'ըլլային , բայց այսօր չեն կրնար ըլլալ . ինչ ձեւերը պէտք է մտնանք :

ՔՕԼՕԼ-ԱԻԵՏ. էՖ. — Կը բողոքեմ փափագեան Ասեփան էֆէնտիին ստէպ ստէպ նախորդ Երեսփոխանութեան դէմ ըրած ամբաստանութեանցը դէմ . նախորդ Երեսփոխանութիւնը որոյ մէջ ես ալ ՚ի սկզբանէ գտնուելու եւ այս անգամ վերստին ընտրուելու պատիւն ունեցած եմ , չեմ կրնար հանդուրժել որ այսպէս յանրաւի թշնամանուի : Եթէ նախորդ Երեսփոխանութեան մէջ գտնուած են իրենց պաշտօնին դէմ մեղանշող անձինք , որք մեզի անձանօթ կը մնան , պէտք է յակամէ յանուանէ յիշուին , եւ ժողովին ամբողջութիւնն այս անիրաւ թըշնամանքներէն զերծ մնայ :

Թորոս Գիսակ պէյ Իկիտ-պաշեան Ասպա էֆէնտի եւ ուրիշ մէկ քանի անձինք ձայնակից ըլլալով կը հաստատեն Գօլուեան էֆէնտիի բողոքը :

ՍՏԵՓ-ՓԱՓԱՋ. էՖ. — Կը հաստատեմ բոլոր ըսածներս եթէ թողտուութիւն ըլլայ :

ԱՊՐՕ էՖ. — Այս տեսակ միջանկեալ խնդիրներ յուզել Ազգ. կարեւոր գործոց որոնք անմիջական անօրէնութիւն կը պահանջեն , կարգադրութեան արգելք մ'է եւ Ընդհ. ժողովոյ նիստերը ապարդիւն կը թողու : Ուստի կառավարկեմ որ Ընդհ. ժողովը օրինապահութեամբ յառաջ երթայ , եւ խնդիրներու համար սահմանեալ կարգը յարգուի :

ԹՈՐՈՍ-ԳԻՍԱԿ ՊԵՅ. — Իմ կարծիքս ալ այն է որ խնդրոց կարգը պահուի , եւ միջանկեալ առաջարկութիւններն եթէ յարմար դատուին , խնդրոց կարգն անցնին :

ՍՏԵՓ-ՓԱՓԱՋ. էՖ. — Ապրօ էֆէնտին պահ մը առաջ Մանանազրութիւնը ձեռքն առաւ եւ Ազգին կարեւոր գործերն տեսնանք ու անկարեւորներն մէկգի թողուք ըսաւ . միթէ մեր յարուցած խնդիրը անկարեւոր խնդիր մ'է . մեր խօսքը պարզենք . Ազգին կամքն է անիկայ , այն մութի սակ մնացած պարագային պատճա-

ռաւ Ազգը յուզմանց , մատանջութեանց եւ խռովութեանց մէջ տատանեցաւ Ազգային գործերը երեսի վրայ մնացին , քստն եւ չորս ժամ շարունակ բազմաթիւ ընտանիքներ իրենց ամուսնոց եւ զաւակաց բանտարկութեան վախէն ահ ու դողի մէջ ինկան եւ այլն : Ասոնք ինչու ըլլալու էին , անցելոյն մէջ Ազգը այս կերպով հարուածող ձեռքը պիտի ճանչնա՞րք եւ մինչեւ հիմա եզածին պէս չ'պիտի թողունք որ ասոնց վրայ վարագոյր մը իջնայ , ամեն բան մթութեան մէջ թաղուի , եւ Ազգը նմանօրինակ պատահարներու առջեւ անպատասպար մնայ : Մանաւանդ որ մեր Ազգը բարոյական մարմին մ'է եւ բարոյական իշխանութիւն մ'ունի , երբ յանցաւորն գէթ բարոյապէս անպատիժ մնայ՝ Ընդհ. ժողովն կրնայ երեւակայել թէ Ազգը այս զանցառութիւնն ինչ ծանր վնասներով կը սուժէ . Հայրիկը՝ որ այսօր պատրիարքական դահը կը բազմի եւ իրմէ թէ եւ բնաւ կասկած մը չունիմք , բայց եթէ վաղը երկու անձի հետ միանայ եւ զմեզ այն նշանաւոր պարագային մէջ դնէ , ո՞ւր կը հասնի Ազգին վիճակը : Եթէ մեր ձայնը ուզեն խեղդել , եթէ մեր առաջարկութիւնը առ ոչինչ զրուի , այն ատեն խորհրդարանէն դուրս զգալի պիտի ըլլայ այս տեսակ ընթացքի մը հետեւութիւնը :

Ս. - ՆԱԽԱԳԱՋ. — Փափագեան էֆէնտի իւր խօսքն Ապրօ էֆէնտիի ուղղելով զանի որպէս թէ ընդդիմադիր կը գտնէ իր սկզբանց , մինչդեռ էապէս իրենց երկուքին ալ նպատակը Ազգին յառաջադիմութիւնն է , եւ այս մասին տարբերութիւն մը չ'կայ , տարբերութիւն հոն կը տեսնեմ միայն թէ Ապրօ էֆէնտի կուզէ որ Երեսփոխանութիւնը ներկայ խնդիրներն յառաջ վարէ , իսկ փափագեան էֆէնտի յառաջադիմելու համար կուզէ ետին գառնալ , նման այն երկրագործին որ մած ՚ի ձեռին յառաջ դացած ատեն յանկարծ կանգ կառնու ճամբուն վրայ թողած մէկ բանն առնելու համար , իր ընթացքը կը փոխէ յետագարձ քայլերով :

ԵՆՈՍՈՒՅ-ՏԻԳ. էՖ. — Պահ մ'առաջ ատենագրութեան խորագրութեան վրայ գիտողութիւններ եղան թէ տեղ տեղ բովանդակութիւններ ըրած է առանց իւրաքանչիւր ատենաբանի խօսքերն մանրամասնօրէն ամփոփելու : Մենք դեռ եւս ատենական ուղագրութիւն չունիմք , եւ աւելորդ է ըսել թէ սովորական գրութեան ձեւով որքան դժուարին է պէտք եղածին պէս ատենագրութիւն մ'ունենալ :

ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. էՖ. — Եթէ ատենագրութիւնները

բաւական չեն , ուրիշներ ալ աւելցուցէք :

ԵՆՈՍՈՒՅ-ՏԻԳ. էՖ. — Կը ցաւիմ որ այս գիտողութիւններն այն անձանց կողմէն կ'ըլլան որք խիստ հմուտ են այս տեսակ գործոց , մանաւանդ այն անձինքը՝ որք բնական ճարտարախօս եւ միանգամայն արագախօս ալ են , պէտք է յիշեն որ արագագրութիւն չունենալով անկարելի է ըսածնին ատենագրել , թէ իրենց ատենաբանութեանցը մէջ քիչ մը ծանր չեն վարուիր . եւ երբ Երեսփոխանք ալ առանց խօսք ուղելու կը խօսին , այն ատեն ատենան ազմկալի կերպարանք մը կ'առնու :

Գիւանին կողմէ մասնաւորապէս կը խնդրեմ Երեսփոխան էֆէնտիներէն որ ատենական կանոնաց ուչ դնեն : Իսկ Խֆէկճեան փափագեան եւ Խօճասարեան էֆէնտիներու գիտողութեանց զալով , ըստ առաջարկութեան Թորոս պէյի պէտք է որ միջանկեալ խնդիրներն խնդրոց կարգն անցնին եւ յաջորդ նիստերուն թողուի վիճարանութիւնն ու որոշու՞մը , որպէս զի օրուան խնդրոցն կարգը՝ ուր մանաւանդ Սահմանագրութեան վերաքննութեան կենսական խնդիրը կայ , չ'խանգարի :

ԽԵՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Շատ աղէկ .

ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. էՖ. — Կը հաւանիմ այդ առաջարկութեան , բայց Գիւանը մինչեւ ցարդ այդպիսի խօսք մը չէր ըրած :

ԵՆՈՍՈՒՅ-ՏԻԳ. էՖ. — Ուրեմն կառավարկեմ նաեւ , որ եթէ ժողովը պատշաճ կը դատի՝ այս միջանկեալ խնդիրը այս կերպով աւարտենք այս օրուան համար , առանց այս մասին եղած վիճարանութիւնն ատենագրութեան մէջ անցնելու :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Ատիկա չի կրնար ըլլալ :
 ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. էՖ. — Ինչ որ խօսուի անպատճառ ատենագրութեան մէջ անցնելու է :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. էՖ. — Այն անձինքը որք չեն ուզեր որ ըսածնին արձանագրուի , պէտք չէ որ խօսին . ժողովին մէջ եղած որ եւ իցէ խօսակցութիւն ատենագրուելու է :

ԵՆՈՍՈՒՅ-ՏԻԳ. էՖ. — Զի հասկցուեցաւ . եղած խօսակցութիւնները շարձանագրուին ըսող չիկայ , ես միայն Գիւանին կողմէն կառավարկեմ թէ քանի որ այս խնդիրը յաջորդ նիստին մէջ նորէն պիտի յուզուի եւ խնդրոցն կենսական մասին վրայ եղած խօսակցութիւնները ամբողջապէս պիտի վերանորոգուին , աւելորդ կըրկնութիւն մը ըրած չըլլալու . եւ այս առթիւ պատահած փոքրիկ յուզման հետքը աննշարեւի ընելու համար այս գիտուածը շարձանագ-

րուի . վասն զի առաջարկութեան նպատակը խնդրոց կարգէն զուրս էր :

ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. ԵՒ ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Ո՛չ , ո՛չ , պէտք է արձանագրուի :

ԵՌԻՍՈՒՅ-ՏԻԳ. ԷՖ. — Շատ լաւ . չեմ պնդեր առաջարկութեանս վրայ :

ՄԱՋԼԸՄ-ՅՈՎՓ. ԷՖ. — Խօսք ուղեցի եւ կէս ժամ ետքը ստացայ զայն . եթէ ամեն անգամ այսպէս ըլլայ , անհնար է որ Երեսփոխան մը կարենայ խօսք ընել պարագային համեմատ . ուստի նախ կը բողոքեմ այս երկարաձգութեան գէժ , եւ երկրորդ կարծեմ թէ յուզուած խընդիրը վերաքննիչ Յանձնաժողովոյ մը միջոցաւ կրնայ լուծուիլ , կամ Յանձնաժողով մը կազմելու է եւ կամ հոս պարզելու է զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր առաջարկութիւնն օրինաւոր կերեւնայ ինձ , բայց կը խնդրեմ որ զայն գրով ներկայացնէք , որ յաջորդ նիստին խնդրոց կարգն անցնի :

ՄԱՋԼԸՄ-ՅՈՎՍ. ԷՖ. Շատ լաւ :

Գ.

ԽՆԴԻՐ ՎԵՐԱՔՆՆԵԱԼ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոց կարգը Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն կը ներկայացնէ . հետեւապէս ժողովն զայն նկատողութեան պիտի առնու հիմա , բայց որովհետեւ բոլոր Երեսփոխանք այս մասին կատարելապէս տեղեկութիւն չունին , հարկ կը համարիմ ինչ ինչ բացատրութիւններ տալ : Երբ որ Բ. Դոնէն վերաքննեալ Սահմանադրութեան օրինակը հասաւ , Ընդհ. ժողովը Մասնաժողովի մը յանձնեց որ զայն քննութեան առնու եւ տեղեկագրէ : Մասնաժողովն գրեթէ վերաքննեալ Սահմանադրութիւնը բոլորովին անգործադրելի համարելով իւր կողմանէ արժան գատած փոփոխութիւններով Սահմանադրութեան ծրագիր մը յօրինած եւ ներկայացուցած էր , որով այժմ Սահմանադրութիւնը երեք օրինակ կը գտնուէր . մէկը այն որ այժմ Ազգին օրէնքն է , երկրորդը Ընդհ. ժողովոյ Մասնաժողովէն խմբագրեալ , Դիւրութիւն ըլլալու համար կառաջարկեմ որ վերաքննեալ Սահմանադրութեանց սպազիր օրինակները Երեսփոխանաց յուղարկուին եւ ժողովոյն իւրաքանչիւր նիստին մէջ մէկ

երկու ժամ յատկանայ վերաքննութեան , եւ միւս ժամերն ալ ուրիշ խնդրոց զբաղի :

ԻՓԷԿՃ-ՀԱՄԲ. ԷՖ. — Երեսփոխանական ժողովն ոչ այնքան կրնայ կարեւորութիւն տալ այն Սահմանադրութեան , որ նոր է եւ վերաքննեալ . որքան անոր՝ որ գործադրութեան մէջ է արդէն , եւ թերութիւններն զգալի : Չայն պէտք է 'ի քննեն առնուլ , պակասները լրացնել եւ 'ի հարկին վերաքննեալ Սահմանադրութեան դիմել , անկից տեղեկութիւն ստանալու համար :

ԱՊՐՕ-ԷՖ. — Խնդիրը Սահմանադրութեան խընդրութեան վրայ է . դանազան դժուարութեանց առաջն առնելու մտք հարկ եղած էր Յանձնաժողովներու միջոցաւ հին Սահմանադրութիւնը վերաքննութեան առնուլ , որոնք մէկ մէկ ծրագիր պատրաստեր են : Հիմա մեր ձեռքը երեք Սահմ. կայ . մին՝ իբր օրէնք կը գործադրեմք եւ կը յարգեմք , իսկ միւսներն՝ մեր իրաւունքներն ձեռքերնուս առեր են թէ մեզ նոր իրաւունքներ տուեր են , նախ եւ առաջ այս չգիտեմք : Դիւրին ձեւով մը այս քննութեան ձեռնարկելու է , եւ այս նպատակին հասնելու իբր միջոց գէշ չըլլար կարծեմ , որ ներկայ Սահմանադրութեան յօդուածներն մաս առ մաս խուսի խուսի Երեսփոխանաց քննութեան յանձնուի , եւ 'ի վերջոյ իր ամբողջութեամբը ժողովին ներկայանայ :

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Արդէն Սահմանադրութիւնը Բ. Դրան եւ Ընդհ. ժողովոյ գրած Յանձնաժողովոց միջոցաւ դատ դատ քննուեր եւ առանձին ծրագիրներ պատրաստուեր են . իրաց այս վիճակին մէջ հիմայ կրկին յանձնախուսմբեր կազմել եւ այս եղանակաւ քննութեան ձեռնարկել , ժողովոյ դժուարութիւններ եւ շփոթութիւններ տալէ զատ ուրիշ բանի չի ծառայեր : Ամենէն հեշտ եղանակն այն է որ Ընդհ. ժողովը իւր յառաջիկայ իւրաքանչիւր նիստերէն բաժին մը հանէ Սահմանադրութեան վերաքննութեան համար , եւ յատենի Ընդհ. ժողովոյ մաս առ մաս պէտք եղած քննութիւնը կատարէ :

ԲԱՐԱԿԷՕՋԵԱՆ-ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. — Ս. Նախագահին առաջարկութիւնը խիստ գործնական կը գտնեմ եւ կը յարեմ որ Երեսփոխանաց զրկուած հրաւիրագիրերուն մէջ Սահմանադրութեան քննելի մասերն յանուանէ նշանակուին , որպէս զի կանխաւ իւրաքանչիւր Երեսփոխան իր դիտողութիւնները պատրաստէ :

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Եղած դիտողութիւններէն կերելի որ Երեսփոխաններէն մեծ մա-

սամբ կատարեալ տեղեկութիւն չունին Սահմանադրութեան վերաքննութեան պարագաներուն վրայ : Վերաքննիչ յանձնաժողովը մտադիր էր արդէն տեղեկագրով մը բացատրութիւններ տալ եղած օրէնսդրական փոփոխութեանց վրայ . բայց իրեն կանխաւ որ եւ է ազդարարութիւն եղած չէր 'ի պաշտօնէ : Ուստի պէտք է որ մէկ կողմէ Երեսփոխաններուն Յրագիրներն հազորուին , միւս կողմէն ալ Վերաքննիչ յանձնաժողովոյ ազդարարութիւն ըլլայ որ պատրաստ գտնուի իր բացատրութիւնները տալու :

ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. ԷՖ. — Միեւնոյն կարծիքէն եմ եւ ես . Երեսփոխանութիւնն անտեղեակ եւ անպատրաստ էր Սահմանադրութեան համար եղած Վերաքննութեանց . Քաղ. ժողովն պէտք էր որ Սահմանադրութեան վերաքննեալ օրինակներն բոլոր Երեսփոխանաց կանխաւ յուղարկեր , եւ Վերաքննիչ մասնաժողովն ալ հրաւիրէր պատրաստ գտնուելու :

ԵՌԻՍՈՒՅ-ՏԻԳ. ԷՖ. — Ձարեանք յայտնուեցաւ Յանձնաժողովոյ կողմէն՝ որ երբ հրաւիրագրոց մէջ Սահմանադրութեան վերաքննութիւնը խնդրոց կարգը կանցնի , Յանձնաժողովը հրաւեր չընդունիր պատրաստ գտնուելու : Կարծեմ թէ այդպիսի պաշտօնակոն ազդարարութիւն մը ընելու մարմին մը չի կայ : Եթէ չեմ սխալիր , Վերաքննիչ մասնաժողովը Ընդհ. ժողովէն ընտրուած ըլլալով խնդրոց կարգին մէջ նշանակած « Խնդիր Վերաքննեալ Սահմանադրութեան » պարբերութիւնը բաւական էր յիշեցնել իրեն իւր պաշտօնն ու պարտաւորութիւնը : Վերաքննիչ մասնաժողովը այս մասին Քաղ. ժողովէն ասկէ աւելի ազդարարութեան մը սպասելու իրաւունք չունէր , վասն զի Մասնաժողովն իւր պաշտօնն աւարտած չըլլալուն համար էր որ արդի Քաղ. ժողովն կազմուած էր , եւ տարակոյս չկայ , որ ինքը կը սպասէր այսօր Մասնաժողովին վերջնական որոշումը լսելու . իսկ Վերաքննեալ Սահմանադրութեան ծրագիր օրինակներն Երեսփոխանաց չըրկուելուն գալով պէտք է նկատել Քաղ. ժողովը նախ վերաքննութեան գործողութեանց մէջ ուղղակի պաշտօն մը չունէր , եւ եթէ ունենար՝ դարձեալ չէր կրնար ուղարկեր քանի որ Երեսփոխաններն դեռ վաւերացուած չէին , եւ Քաղ. ժողովն չէր կրնար առանց այս պարագան նկատելու ծրագիրներ զրկել :

ԱՄԲԵՐՍԻՈՍ-ՎԱՐԴԱՊԵՏ. — Որովհետեւ նոր Երեսփոխանութիւնը գաղափար չունի իր ձեռքը գտնուած Սահմ. տեսարակներուն վրայ , կը

հարցնեմ թէ երբ գործադրութեան շրջանին մէջ գտնուած տեսարակը իբր օրէնք կը ճանչնայ , միւսներն իբրեւ ինչ պիտի նկատէ :

ԻՐԷԿՃ-ՀԱՄ. ԷՖ. — Գործադրութեան մէջ գտնուած Սահմանադրութիւնը վերաքննելի է միայն . Երեսփոխանութիւնը պէտք է որ իւր նախորդին փորձառութեամբ գտած թերութիւններն ուղղէ , իսկ միւս տեսարակներն կրնան մեղի օգնութիւն ընել , բայց պէտք է իբր ըսկորուք գիտնալ որ իբրեւ վերաքննելի տեսարակ չեմք կրնար ընդունիլ :

ՓԱՓԱՋ-ՍՏԵՓ. ԷՖ. — 1863 ի Սահմանադրութիւնը վերաքննութեան ներքեւ է եւ իր օրէնքի ուժը պահելով կը գործադրուի՝ ցարգ : Ասկից առաջ Երեսփոխանական ժողովը Յանձնաժողով մը կազմելով վերաքննութեան պաշտօն տուեր է անոր , որու կողմէ ծրագիր մը պատրաստուեր եւ ներկայացեր է Ընդհ. ժողովոյ : Յանձնաժողովոյ ծրագիրը պէտք է անպէտ համարուի , այլ Երեսփոխանաց ուղարկուելով զիտողութեան առնելու է :

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Սահմանադրութիւնը գործադրութեան մէջ է եւ սրբազրեյի , միանգամայն Վերաքննիչ յանձնաժողովն փոփոխութիւններ ըրած է արդէն եւ ըստ այնմ իր ծրագիրը ներկայացուցած : Անոր գործը աննշան համարուելու չէ , այլ պէտք է երկու օրինակաց վրայ բաղդատութիւններ ու քննութիւններ ընել :

ԻԻԹԻՒՅ-ԿԱՐ-ԷՖ. — 63 ի Սահմանադրութիւնը 5 տարի ետքը վերաքննելի էր , սակայն ժամանակէն առաջ վերաքննութեան ենթարկուեցաւ եւ մինչեւ հիմա չերկարաձգուեցաւ . Սահմանադրութեան համեմատ արդէն Յանձնաժողով մը կազմուած է վերաքննութեան համար , որ իւր պաշտօնն կատարելով իր քննութիւններն ըրած , ծրագիր մը ներկայացուցած է եւ միանգամայն մտադիր է պէտք եղած բացատրութիւններն տեղեկագրով մը հազորգել Ընդհ. ժողովոյն :

ԵՌԻՍՈՒՅ-ՏԻԳ. ԷՖ. — Դիւանն այնպէս կը հասկնայ որ Սահմանադրութեան յօդուածները մաս առ մաս խնդրոց կարգը պիտի անցնին . բայց քննութեանէն առաջ Վերաքննիչ մասնաժողովն տեղեկագիր մը ներկայացնելով իր ըրած փոփոխութիւններն պիտի պարզէ : Ընդհ. ժողովոյ Դիւանը վերաքննեալ Սահմանադրութեան ծրագիրներն չունի , պէտք է կրկին տպագրել տալ :

ԱՊՐՕ ԷՖ. — Անկարելի է որ Երեսփոխան մը այս երեք տեսարակներն միանգամայն աչքէ

անցնէ, եւ իր հաւանութեան քուէն տայ վասն զի ինչպէս որ արդէն ըսի չեմք գիտեր թէ մեզի նոր իրաւունք մը տուած են թէ ձեռքերնուս արդէն ունեցած իրաւունք մը առած են, եւ կը կարծեմ թէ երկուքն ալ ընելու իրաւունք չունին: Ըստ իս 63 ի Սահմանադրութիւնը միայն սրբազրել աւելի դիւրին պիտի ըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վերաքննեալ սահմանադրութիւնը եթէ իր մէջ սեղմութեան ունի, ինչպէս խել մը անգործադրելի դատուած ժողովներ վերցուած են, պատճառն այն է որ Յանձնաժողովը Բ. Գոնէն եկած հրամանին հետեւած է, ինչպէս տեղեկագրին մէջ պիտի տեսնուի: Այս խնդրոյն վրայ որչափ վիճաքանութիւն որ ըլլայ կարճ է, բայց կը տեսնեմ որ Երեսփոխանք ընդհանրապէս վերաքննութեան վիճաքանութեանը մէջ այնչափ եռանդ չեն ցուցներ որչափ որ ուրիշ խնդրոց մէջ: Մասնաւորապէս Փափազեան էֆէնտի բարեկամիս կըսեմ որ իւր եռանդն ու բացազանչութիւնները չ'սպառէ անօգուտ տեղը, եւ զանոնք վերաքննութեան վիճաքանութեանը պահէ:

ՓԱՓԱՋ-ԱՏԵՓ. ԷՖ. — Եռանդեամբ խօսեցայ այլ ոչ կրիւք. նոյն եռանդեամբ պիտի խօսիմ նաեւ վերաքննութեան միջոցին, վասն զի ազգային շահուց համար մեր պարտքն է եռանդազդին ըլլալ, առանց բացազանչութիւններ ընելու, որոնք ուրիշներու հանգամանքներ կրնան ըլլալ:

ԱՄԲԲՈ-ՎԱՐ. — Իմ նախորդ հարցումս երկրորդելով կը խնդրեմ որ տեղեկութիւն արուի մեզ թէ Սահմանադրութեան միւս երկու ծրագիրներն իրրեւ ինչ պիտի նկատուին:

ԹՈՐՈՍ ԳԻՍԱԿ ՊԷՅ. — Քանի որ խնդիրը Սահմանադրութեան վերաքննութեան վրայ է, վերաքննիչ Յանձնաժողովէն պէտք եղած լոյսն առնելու համար տեղեկագիր մը խնդրելու է:

ԻԹԻԻՅ-ՎԱՐ ԷՖ. — Կարծիք կայ թէ վերաքննիչ Յանձնաժողովը Բ. Գոնէն եկած ծրագիրը հիմն բռնած է իրեն, սակայն սխալ է այս կարծիքը. Յանձնաժողովը իւր քննութիւններն աւելի 63 ի Սահմանադրութեան վրայ ըրած է քան թէ ուրիշ օրինակի վրայ:

ԻՓԷԿՃ-ՀԱՄԲ. ԷՖ. — Վերաքննեալը կրկին վերաքննել հարկ չ'կայ, կը պնդեմ որ գործադրութեան շրջանին մէջ գտնուածը ուշադրութեան առնու ընդհ. ժողովը, իր ձեռքը իրր լուսատու թերթեր ունենալով, միւս ծրագիրներն ու Յանձնաժողովոյ տեղեկագրին:

ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Ոմանք կը կարծեն թէ Ազգին մէջէն խուճը մը մարդիկ ելեր Սահմանադրութիւն մը շիներ են ինքնօրինարար, եւ Ազգին տուեր են որ ընդունի դայն. ուստի կը հարցնեն թէ Ազգն իրը տեսնուի, իրր թերթ, թէ իրր Սահմանադրութիւն պիտի ընդունի անոր պատրաստած ծրագիրը: Բայց խնդիրն այնպէս չէ. Յանձնաժողովը նախորդ Երեսփոխանութեան կողմէ սահմանուելով, Սահմանադրութիւնը վերաքննած է, տարբեր խնդիրներ յարուցանելը թէ ընդհ. ժողովը եւ թէ Յանձնաժողովը անպատուել է:

ԱՄԲԲՈ-ՎԱՐ. — Ես Գիւանէն պատասխան կուզեմ այդ տեսարակներուն ինչ ըլլալն հասկընալու համար եւսչ ոք կ'անպատուեմ:

ԵՈՒՍՈՒՑ-ՏԻԳ. ԷՖ. — Ի պատասխանի Արժ. Ամբրո. Վար. Գիւանը պարտ կը համարի յայտնել թէ վերաքննեալ Սահմանադրութեան վրայ տեղեկութիւն տալու պաշտօնը Վերաքննիչ Յանձնաժողովոյն կը պատկանի. այս պատճառաւ իւր ըրած հարցմանց նոյն Յանձնաժողովոյ անդամները պարտաւոր էին պատասխանել, Հետեւապէս Գիւանն ուրիշ բան մը չ'կրնար ըսել, եթէ ոչ՝ կրկնել թէ իւր տեղանին վրայ այժմ վերաքննելի Սահմանադրութեան երեք օրինակ կը գտնուի, մին՝ այժմու գործադրեալը, միւսը՝ Բ. Գոնէն եկածը, եւ երրորդն ալ Մասնաժողովին խմբագրածը: Գիւանը կ'խնդրէ միայն որ այս խնդիրը դիւրութեամբ լուծուելու համար վերաքննիչ Մասնաժողովոյ տեղեկագրին սպասուի:


ԽՕՃԱՍԱՐ-ՕԳՍ. ԷՖ. — Ընդհ. ժողովը մեծագոյն մաս չ'գտնելու դժբաղդութենէն զերծ պահելու համար կառավարիւմ որ իւրաքանչիւր նիստի բացակայ Երեսփոխանաց անուններն ի պաշտօնէ հրատարակուին լրագրաց միջոցաւ:

Քարակէօղեան Արապես էֆէնտի կերկրորդէ այս առաջարկութիւնը խիստ օգտակար համարելով ժողովին գործոց յարատեւութեանը:

Այս առաջարկութիւնը կրնուի եւ կորոշուի յառաջիկայ ուրբաթ օր (28 օգոստոս) կրկին ընդհ. ժողով դուժարել մնացորդ խնդրոց անօրէնութեան համար: Իսկ խնդրոց կարգին պատրաստութիւնը Ս. Նախագահին եւ Գիւանին յանձնուեցաւ:

Ատեանը գոցուեցաւ ժամ 10 1/2 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ
ՏԻԳ. ԵՈՒՍՈՒՑԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. Ս. ՕՏԵԱՆ



Ազգային Ընհանուր Ժողովոյ 1870 օգոստոս 21 ի Առեանին
մէջ եղած որոշման համեմատ իւրաքանչիւր նասին արձանագ-
րու թիւներն հետզհետէ պիտի հրատարակուին առանձին թեր-
թերով, այնպիսի եղանակաւ որ ՚ի վերջոյ տարեկան առեւազ-
րու թիւնք կազմելով կարենան Ազգային պատմութեան հատոր
մը ներկայացնել :

Կը ծախուի Գրաւաճառ Գաֆաֆեան Պ. Յովսէփին խանու-
թը : Իւրաքանչիւր թերթին գինն է 100 փարսյ :